

# «Պետական արարողակարգի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծ

ՆԱԽԱԳԻԾ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

### Օ Ր Ե Ն Զ Ը

#### «ՊԵՏԱԿԱՆ ԱՐԱՐՈՂԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ»

#### ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 1.** «Պետական արարողակարգի մասին» 2018 թվականի մարտի 23-ի ՀՕ-291-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում հանել «բարձրաստիճան» բառը.

**Հոդված 2.** Օրենքի 7-րդ հոդվածում՝

- 1-ին մասում «Բարձրաստիճան» բառը փոխարինել «Սույն օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված» բառերով.
- 2-րդ մասում «Գործադիր իշխանության» բառերը փոխարինել «Պետական կառավարման համակարգի» բառերով և հանել «բարձրաստիճան» բառը.

**Հոդված 3.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից: